ՄԵ՛ՆՔ ԵՆՔ
ՄԵՐ ՍԱՐԵՐԸ
Տարածքային զարգացման
գործակալություն

Հաստատված է
«ՄՄՍ» ՏԶԳ ՀԿ գլխավոր տնօրենի
30.01.2024թ. N 01/24 հրամանով
Գ. Մարտիրոսյան

Հաշվետվություն
«ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» տարածքային զարգացման գործակալության 2023թ. գործունեության

«Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալություն է (այսուհետ՝ Գործակալություն), որը հիմնադրվել է 2022 թվականի վերջին Ռուբեն Վարդանյանի և իր համախոհների կողմից: Գործակալությունը պետական և տեղական կառույցների, հասարակական և մասնավոր հաստատությունների և կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ իրականացնում է զարգացման ծրագրեր (նախագծեր): Գործակալության ծրագրերն առաջին հերթին ուղղված են Արցախի բնակչությանն աջակցելուն:

ԱՐՑԱԽՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

(2022թ. նոյեմբեր - 2023թ. մայիս)

2022 թվականի նոյեմբերից մինչև 2023 թվականի մայիսն ընկած ժամանակահատվածում Գործակալության գործունեությունը հիմնականում ուղղված է եղել Արցախում **հանրային նշանակալի նախագծերի իրականացմանը՝** ուղղված ինչպես շրջափակման մեջ գտնվող բնակչության առաջնահերթ կարիքների բավարարմանը, այնպես էլ երկարաժամկետ սոցիալական զարգացմանը: Ընդհանուր առմամբ, այս ընթացքում իրականացվել են հետևյալ նախագծերը՝ ընդգրկելով արցախցիների կյանքի գրեթե բոլոր ոլորտները.

1. ԱՐՑԱԽԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ

Նախագծի նպատակն էր Արցախի բնակիչների համար պարենային պահուստը համալրել բարձր սննդային արժեք ունեցող երկար պահպանվող մթերքներով: Առաջին հերթին նախապատվությունը տրվել է փոշային և/կամ փաթիլային պարենամթերքի, ձավարեղենի,

մակարոնեղենի ձեռքբերմանը, որոնք օպտիմալ են փոխադրման, պահպանման և էներգաարժեքի առումով՝ արտակարգ իրավիճակներում Արցախի բնակչության բնականոն գործունեությունը ապահովելու համար:

Նախագծի շրջանակներում Գործակալությունը և գործընկերները ձեռք են բերել և Հայաստանի (Գորիս) համապատասխան պահեստում Արցախի կառավարությանը փոխանցել **ավելի քան 449.8 հազար դոլար** արժողությամբ **ավելի քան 177 տոննա** պարենամթերք: Եվս **մոտ 94 տոննա** պարենամթերք Գործակալության միջնորդությամբ փոխանցվել է կառավարությանը՝ անմիջականորեն մեր գործընկերների կողմից:

Շրջափակման պատճառով կառավարությունը չի կարողացել ստացված պարենամթերքի մեծ մասը տեղափոխել Արցախ: Այլ բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում Գործակալությունը նախաձեռնել է նշված պարենամթերքի բաշխումը Հայաստանում՝ բռնի տեղահանված ընտանիքներին:

2. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

Նախագծի նպատակն էր բարձրացնել էներգետիկ անվտանգությունը, ինչպես նաև Արցախի էներգետիկ շրջափակման արտակարգ իրավիճակում բնակչությանը ջրամատակարարման հուսալիությունը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է հետևյալը.

- Ստեփանակերտ և Մարտունի քաղաքների պոմպային ջրամատակարարման համակարգի առանցքային կետերում **վթարային դիզելային էլեկտրագեներատորների և էլեկտրական մարտկոցների** ձեռքբերում և տեղադրում, ինչը հնարավորություն է տվել ապահովել այս քաղաքների ջրամատակարարումը հոսանքազրկման պայմաններում.
- **դյուրակիր արևային էլեկտրագեներատորների** ձեռքբերում դաշտային պայմաններում օգտագործելու համար.
- անապահով ընտանիքների, կրթական և բժշկական հաստատությունների համար **փայտի վառարանների** ձեռքբերում. դա հնարավորություն է տվել էներգետիկ շրջափակման և ցուրտ ձմռան ժամանակ Ստեփանակերտում և շրջաններում տաքացնել տները, դպրոցներն ու հիվանդանոցները: Վառարանները ձեռք են բերվել և փոխանցվել համապատասխան պետական կազմակերպություններին՝ հետագա բաշխման համար, Գործակալության միջնորդությամբ գործընկեր կազմակերպությունների կողմից:

Վերոնշյալ բոլոր ապրանքները փոխանցվել են Արցախի պետական մարմիններին և կազմակերպություններին՝ բնակչության կարիքները հոգալու համար: Նախագծի իրականացման համար հատկացված ընդհանուր գումարը կազմել է **ավելի քան 186.7 հազար դոլար**:

3. ՆՎԵՐՆԵՐ՝ ԱՐՑԱԽԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Նախագծի նպատակն էր՝ նվերներ տրամադրել մինչև տասը տարեկան ավելի քան 12000 արցախցի երեխաների: Զատկի տոնին երեխաներին տրվեցին նվերներ, որոնք ներառում էին խաղալիքներ, մանկական գրքեր, ուսուցողական խաղեր: Նախագծի գումարը կազմել է **մոտ 171.7 հազար դոլար**:

4. ԱՌԱՋՆԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԱՆԵՐ

Նախագիծը նախատեսում էր ստեղծել երեք շարժական բրիգադաներ (բժիշկ-թերապևտ և

բուժքույր)՝ Արցախի Մարտունու, Ասկերանի և Մարտակերտի շրջանների գյուղերի բնակիչներին առաջնային բուժօգնություն ցուցաբերելու նպատակով: Նախագծի իրականացման գործընկերներն էին ՀԵՆԱՐ բարեգործական հիմնադրամը և Արցախի Հանրապետության առողջապահության նախարարությունը: Շարժական բրիգադներից մեկը մի քանի ամիս հաջողությամբ սպասարկել է Արցախի Մարտունու շրջանը: Մյուս երկու բրիգադների ստեղծումը կանխվել է Արցախի շրջափակմամբ: Նախագծի մասնակի իրականացման համար հատկացված ընդհանուր գումարը կազմել է **ավելի քան 109.8 հազար դոլար**:

5. ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ ԱՐՑԱԽՈՒՄ

Նախագիծը ներառում էր շինանյութերի գնում և 2020 թվականի պատերազմի ժամանակ հրետակոծության հետևանքով վնասված բնակելի տների վերանորոգման-վերականգնման աշխատանքների իրականացում:

Շրջափակման պատճառով նախագիծը իրականացվեց մասնակի: Նախագծի շրջանակներում Գործակալության գործընկերները ձեռք են բերել շինանյութեր և դրանք ուղղակիորեն փոխանցել Արցախի կառավարությանը՝ Հայաստանի (Գորիս) համապատասխան պահեստներում:

6. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓԱՌԱՏՈՆ «ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԳԵՂԱԴԻՏԱԿ»

Նախագիծը ներառում էր ուսուցողական նախագծերի շարք բնակչության բոլոր տարիքային խմբերի համար, որոնք իրականացվեցին Արցախի քաղաքներում և գյուղերում: Նախագծի իրականացման գործընկերներն են «Մատենա» Առաջնորդության և Մասնագիտական Զարգացման Միջազգային Դպրոցը, ավագ դպրոցների և բուհերի ուսանողների համար նախատեսված «Climate Uturn» ուսուցողական ծրագիրը և «Scholae Mundi Armenia» բարեգործական հիմնադրամը:

Նախագծի շրջանակներում իրականացվել են «Agrocamp» ծրագիրը, «Մատենա» առաջնորդության զարգացման ծրագիրը, «CaseKey» ձեռներեցության մրցույթը, առաջին բուժօգնության դասընթացներ, համակարգչային ծրագրերի ուսուցման դասընթացներ և այլն, ներգրավված մասնակիցների ընդհանուր թիվը մոտ 500 էր: Նախագծի ընդհանուր բյուջեն կազմել է **մոտ 45.6 հազար դոլար**:

7. ՄԱՐԶԱԿԱՆ-ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ԽԱՂԵՐ «ԴԱՎԻԹ ԲԵԿ»

Նախագիծը ներառում էր «Դավիթ-Բեկ» մարզական-մարտավարական խաղերի կազմակերպում 15-17 տարեկան 120 դպրոցականների ներգրավմամբ, այդ թվում՝ մանկական ճամբարի կազմակերպում՝ խաղերի մասնակից տղաների և աղջիկների համար դաշտային պարապմունքներով: Նախագծի իրականացման գործընկերն էր Երիտասարդական Ակումբների Ալյանսը: Նախագիծը հաջողությամբ իրականացվել է 2023թ. հուլիս-օգոստոս ամիսներին: Նախագծի փաստացի բյուջեն կազմել է **84.0 հազ. դոլար**:

8. ՁԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «3333»

Իրականացվող նախագծերի հասցեականությունն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Գործակալությունը Արցախի բնակչության հետ հետադարձ կապ հաստատեց

Ստեփանակերտում բազմալիք զանգերի կենտրոնի ստեղծման միջոցով: Իր գործունեության 5-ամսյա ժամանակահատվածում զանգերի կենտրոնը ստացել է ավելի քան 4000 զանգ և հարցում: Նախագծի ընդհանուր բյուջեն կազմել է **մոտ 18.4 հազար դոլար**:

Գործակալության ուշադրությունից չի վրիպել նաև արցախահայության ազգային մշակույթի պահպանման, հոգևոր, լեզվական և մտավոր միջավայրի զարգացման խնդիրը, ուստի Գործակալությունը նախաձեռնել է «Մեր սարերը» հասարակական կենտրոնի ստեղծումը, ինչպես նաև նոր ռադիոկայան Արցախում հայերեն լեզվով:

9. «ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գործակալության կողմից Ստեփանակերտում ստեղծված **«Մեր սարերը»** հասարակական կենտրոնը հարթակ է դարձել գործընկեր կազմակերպությունների կողմից իրականացվող բազմաթիվ մշակութային, կրթական և այլ նախաձեռնությունների համար և սկսել է նշանակալից դեր խաղալ Արցախի հասարակական կյանքում: Ֆիլմերի ցուցադրություն, համերգների, ցուցահանդեսների անցկացում, զարգացման տարբեր դասընթացների կազմակերպում, գրադարան, հոգեբանական աջակցություն հատուկ կարիքներով երեխաներին, երիտասարդական կազմակերպությունների ֆորում և մայրիկների վերապատրաստման դասընթացներ. սա կենտրոնում տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված միջոցառումների ոչ լրիվ ցանկն է: Հարթակը գործընկերներին տրամադրվել է անվճար, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ցուցաբերվել է կազմակերպչական և նյութական աջակցություն: Կենտրոնի գործունեության 8 ամիսների ընդհանուր բյուջեն կազմել է **մոտ 242.8 հազար դոլար**:

Կենտրոնի վերլուծական գործունեության շրջանակներում մի խումբ փորձագետների կողմից պատրաստված **«Արցախի տնտեսության շրջափակման հետևանքով կորուստների գնահատման հաշվետվությունը»** պատրաստվել և ներկայացվել է տնտեսագետների և տնտեսական լրագրողների լայն շրջանակի:

10. ՌԱԴԻՈ «ՄԵՐ ՍԱՐԵՐԸ»

«Մեր սարերը» երաժշտական-տեղեկատվական ռադիոն սկսել է հեռարձակվել 2023 թվականի մայիսի 1-ից Ստեփանակերտում և Արցախի շրջաններում և այն ժամանակ եղել է միակ ոչ պետական հայալեզու ռադիոկայանը Արցախում: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է **մոտ 47.0 հազար դոլար**:

Ստորև՝ 11-13 պարագրաֆներում ներկայացված նախագծերը, որոնք նախաձեռնվել էին Գործակալության կողմից՝ Արցախի կառավարության հետ համագործակցությամբ և նպատակաուղղված էին նշանակալի ներդրում ունենալու երկրի էներգետիկ և պարենային անվտանգության բարձրացման գործում, ցավոք, չկարողացան իրագործվել Արցախի ամբողջական պաշարման և անհրաժեշտ սարքավորումների ներմուծման անհնարինության պատճառով:

11. ԱՐԵՎԱՅԻՆ ՋՐԱՏԱՔԱՅՈՒՅԻՉՆԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախագիծը ներառում էր ջրատաքացուցիչների տեղադրում 70 մանկապարտեզներում և

բուժհաստատություններում, ինչպես նաև մանկատանը: Դրա իրականացումը կօգներ էապես նվազեցնելու այդ հաստատությունների կախվածությունը էլեկտրաէներգիայի արտաքին աղբյուրներից և մեծացնելու նրանց ինքնաբավությունը, ինչը հատկապես կարևոր էր էներգետիկ շրջափակման ժամանակ:

12. ՆՈՐ ԿՅԱՆՔ ԱՐՑԱԽԻ ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Նախագիծը ներառում էր ավելի քան 14 000 ք.մ. ընդհանուր մակերեսով մոտ 20 ջերմոցային տնտեսությունների վերագինում համակարգերով, որոնք անհրաժեշտ էին դրանց արդյունավետությունը բարձրացնելու (ջեռուցում և այլն) և կլոր տարի բերք ստանալու համար: Նախագծի իրականացման գործընկերն էր Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը:

13. ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ

Նախագծի նպատակն էր էլեկտրաէներգիայի պահուստային աղբյուր ստեղծել երկրի գլխավոր բուժհիմնարկի՝ Հանրապետական բժշկական կենտրոնի (ՀԲԿ) համար: Նախատեսվում էր ստեղծել 517 կՎտ դրվածքային հզորությամբ արևային հիբրիդային էլեկտրակայան՝ ապահովելով ՀԲԿ-ի կենսական նշանակության ստորաբաժանումների աշխատանքը մինչև 12 ժամ՝ ցանցում էլեկտրաէներգիայի բացակայության դեպքում:

<u>ՀՐԱՏԱՊ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ</u>

<u>(2023թ. հունիս - սեպտեմբեր)</u>

Հունիսի 15-ից ի վեր Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակումը ստացել էր տոտալ բնույթ, երբ Լաչինի միջանցքով թույլ չէին տրվել անգամ Ռուսական խաղաղապահ զորակազմի և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի բեռնափոխադրումները: Նման պայմաններում գրեթե անհնարին դարձավ Գործակալության՝ Արցախի բնակչությանը օգնություն ցուցաբերելու նախագծերի մեծ մասի շարունակությունը: Ցանկացած սննդամթերքի, ավտոմեքենաների վառելիքի ներկրման իսպառ բացակայության, ինչպես նաև շարունակվող էներգետիկ շրջափակման պայմաններում Արցախի բնակչությունը կանգնեց հումանիտար աղետի առաջ: Ուստի, Գործակալությունը ստիպված եղավ իրականացնել հրատապ աջակցության մի շարք ծրագրեր՝ ընդհանուր **մոտ 282.7 հազար դոլար** արժողությամբ, որոնցից հիմնականներն են.

- կարիքավորների համար սոցիալական ճաշարանների կազմակերպում (ամեն օր ավելի քան 500 հոգու տրամադրվում էր լիարժեք տաք սնունդ),

- սպասվող ցուրտ եղանակին բնակչության կարիքների համար փայտի վառարանների արտադրություն,

- բարձր կալորիականությամբ մթերքներով պարենային փաթեթների տրամադրում բոլոր հղիներին,

- գյուղերից քաղաքներ սնունդ հասցնելու համար ձիաքարշ սայլերի պատրաստում,

- Արցախի Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում 15 ապաստարանների ստեղծում,

- աջակցություն ճագարաբուծությամբ և թռչնաբուծությամբ զբաղվող տնտեսություններին,

- կենցաղային թափոններից գազի և հեղուկ վառելիքի արտադրության սարքավորումների ստեղծում.

- Արցախի «Հակոբավանք» վանական համալիրի և Քոլատակ գյուղում տների և հասարակական նշանակության կառույցների վերականգնում,

- էլեկտրական մեքենաների ձեռքբերում և դրանց օգտագործում հղիների, ինչպես նաև առողջական խնդիրներ ունեցող անձանց բժշկական հաստատություններ տեղափոխման կազմակերպման համար (ավելի քան 1000 դեպք):

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ

(2023թ. հոկտեմբեր - դեկտեմբեր)

Սեպտեմբերյան ողբերգական իրադարձություններից հետո, հավատարիմ մնալով իր առաքելությանը, Գործակալությունը շարունակեց իր գործունեությունը Հայաստանում՝ իրականացնելով աջակցության նախագծեր կյանքի դժվարին իրավիճակում հայտնված Արցախից բռնի տեղահանվածների համար:

1. «ԹԵՎԵՐ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Թևեր»-ը վերականգնողական ծրագիր է՝ 2023 թվականի սեպտեմբերյան իրադարձությունների հետևանքով Արցախից բռնի տեղահանված 4-18 տարեկան երեխաների համար: Ծրագիրն ուղղված է երեխաների ֆիզիկական, հոգեբանական և մտավոր ռեսուրսների վերականգնմանը թերապիաների եւ սպորտի միջոցով (լող, ֆուտբոլ, արտ-թերապիա, հեքիաթաթերապիա, ավազաթերապիա և այլն), ինչպես նաև դեռահասների համար՝ ադապտացիայի և առաջնորդության ու ձեռնարկատիրական որակների ձևավորման ծրագրերի միջոցով:

«Թևեր»-ի փորձնական փուլը՝ արցախյան 28 ընտանիքի 43 երեխաների համար կայացել է Դիլիջանում 2023 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Ծրագրի գործընկերներն էին Դիլիջանի համայնքային կենտրոնը, UWC Դիլիջանի քոլեջը, Climate Uturn կրթական նախաձեռնությունը և «Իմպուլս» Ֆուտբոլի Ակադեմիան: Պիլոտային փուլի բյուջեն կազմել է **մոտ 13.4 հազար դոլար**: Ծրագիրը կշարունակվի 2024 թվականին:

2. ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ

Նախագծի նպատակն է օգնել Արցախը հարկադրաբար լքած արհեստավորներին հնարավորինս շուտ վերսկսել աշխատանքը Հայաստանում և բարելավել իրենց ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը: Նախագիծը ներառում է վերապատրաստման (վերարտակավորման) դասընթացների կազմակերպում և դրամաշնորհների տրամադրում աշխատանքի վերսկսման համար անհրաժեշտ գործիքների ձեռքբերման նպատակով: Նախագծի առաջին փորձնական փուլում 115 դիմորդներից աջակցություն են ստացել

ընտրական փուլ անցած 33 արհեստավորներ (կոշկակարներ, ոսկերիչներ, խեցեգործներ, հրուշակագործներ, կահույքագործներ, վերանորոգողներ, գեղեցկության մասնագետներ և այլն): Նախագիծը լավ հնարավորություն էր որոշ շահառուների համար ճանաչելու միմյանց և միավորվելու իրենց գործունեության մեջ:

Հաշվետու տարվա ավարտին նախագծի ծախսերը կազմել են **շուրջ 18.3 հազար դոլար**, ծրագիրը կշարունակվի նաև 2024 թվականին: Հաջորդ փուլում նախատեսվում է աջակցություն ցուցաբերել ավելի քան 100 վարպետների:

3. «LEADERS-2-LEADERS» ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«LEADERS-2-LEADERS»-ը շարունակական զարգացման տրանսֆորմացիոն ծրագիր է, որն իրականացվում է Արցախից բռնի տեղահանված ապագա առաջնորդների համար, և կառուցված է «հավասարը՝ հավասարին» սկզբունքով: Ծրագրի իրականացումը հնարավոր է դարձել «Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալության, Առաջնորդության ու մասնագիտականզարգացման «Մատենա» միջազգային դպրոցի փորձագետների և շրջանավարտների, ինչպես նաև աշխարհահռչակ կրթական հաստատությունների՝ Հարվարդի և Օքսֆորդի, Հայաստանում շրջանավարտների համատեղ ջանքերով:

Ծրագրի նպատակն է խթանել խորացված ուսուցման և վերապատրաստման համապարփակ գործընթացները, բարձրացնել ծրագրի մասնակիցների մրցունակությունը աշխատաշուկայում, աջակցել նրանց ձեռնարկատիրական նախաձեռնությունների զարգացմանը և, որ ամենակարևորն է, ստեղծել համախոհ առաջնորդների վստահելի ցանց:

Ծրագրի առաջին մոդուլը տեղի է ունեցել 2023 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ 25 մասնակիցների համար, իսկ շարունակությունը նախատեսված է 2024 թվականին: Այս փուլում ծրագիրն իրականացվում է առանց ֆինանսական ռեսուրսների ներգրավման՝ pro bono դասընթացավարների և հոգեբանների կողմից: Նրանց ներդրման ֆինանսական գնահատականը կտրվի ծրագրի ավարտից հետո, հետագա հաշվետվություններում:

4. ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հապճեպ արտագաղթի պատճառով բռնի տեղահանված և Հայաստանում հաստատված արցախցիների մեծ մասը չկարողացավ տեղափոխել իր առաջին անհրաժեշտության իրերը: Նախագծի շրջանակներում Ամանորին ընդառաջ Սյունիքի մարզի Տաթև խոշորացված համայնքում բնակություն հաստատած արցախցի 49 ընտանիքների են տրվել առաջին անհրաժեշտության կենցաղային ապրանքների (վառարաններ, սպասք, կենցաղային տեխնիկա, կահույք և այլն) ձեռքբերման վկայականներ: Նախագծի ընդհանուր արժեքը կազմել է **ավելի քան 24.4 հազար դոլար**:

5. ՆՎԻՐԻՐ ՏՈՆ

Նախագծի շրջանակներում, որի իրականացման գործընկերներն էին Հալիձորի համայնքային կենտրոնը և Տաթևի համայնքապետարանը, Տաթև համայնքում ժամանակավոր ապաստան գտած արցախյան ընտանիքների երեխաներին տրվեցին ամանորյա նվերներ՝ հաշվի առնելով, որ բռնի տեղահանման հետևանքով նրանք Արցախում են թողել իրենց խաղալիքներն ու գրքերը: Տոնածառերի և ամանորյա զարդարանքների հետ միասին երեխաները ստացան գրքեր, գրենական պիտույքներ, ինչպես նաև մասնակցեցին Շինուհայր

գյուղում իրենց համար կազմակերպված ամանորյա բեմադրությանը:

Տոնական միջոցառում է կազմակերպվել նաև Գյումրիում գտնվող արցախցի երեխաների համար: Ընդհանուր առմամբ ծրագրի շահառու է դարձել շուրջ 200 արցախցի երեխա: Միջոցառումներին մասնակցել են նաև տեղացի երեխաները: Նախագծի բյուջեն կազմել է **մոտ 2.9 հազար դոլար**:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱԼՅԱՆՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

Երիտասարդական ակումբների ալյանսը ձևավորվել է մի խումբ երիտասարդ համախոհների կողմից՝ նպատակ ունենալով շրջաններում բացահայտել և զարգացնել հասարակությանը համախմբող և մոբիլիզացնող երիտասարդ առաջնորդների՝ անհրաժեշտ խնդիրները լուծելու համար: Դաշինքի գործունեության շրջանակը ներառում է կամավորական, մարզական, էքստրեմալ, մշակութային և կրթական ծրագրերի ու նախագծերի իրականացում: Մասնավորապես, 2023 թվականի ընթացքում Ալյանսը իրականացրել է հետևյալ նախագծերը՝ ընդհանուր առմամբ ավելի քան հազար մասնակիցների ներգրավմամբ.

- գոյատևման հմտությունների ծրագիր,
- շտապ բժշկական օգնության դասընթացներ,
- ինքնակառավարման դասընթացներ,
- ֆոլկ (ժողովրդական երգեր և պարեր),
- ինտելեկտուալ խաղեր,
- կամավորական աջակցություն միայնակ թոշակառուներին և հաշմանդամներին սննդի կանոնավոր մատակարարման հարցում:

Ալյանսի գործունեությանը աջակցության ընդհանուր գումարը կազմել է **շուրջ 106.6 հազար դոլար**:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԻ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ

Գործակալությունն աջակցեց **«ՄՈՒՆՔ» տեխնոլոգիական ճամբարի** կազմակերպմանը, որը նախաձեռնել էր ԵՍ կրթական հիմնադրամը 210 երեխաների համար՝ նպատակ ունենալով ծանոթացնել նրանց ՏՏ ոլորտին և տրամադրել հիմնական հմտություններ, զարգացնել նրանց ալգորիթմական մտածողությունը:

Գործակալությունն աջակցել է նաև **«Դավիթ Ղազարյան» բարեգործական հիմնադրամի** կողմից մանկական ճամբարի կազմակերպմանը:

Այս օգնության ընդհանուր գումարը կազմել է **մոտ 10.6 հազար դոլար**:

ՈՒՂԻՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հատուկ սոցիալական դեպքերում Գործակալությունը ուղղակի ֆինանսական աջակցություն է ցուցաբերել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց՝ զոհվածների ընտանիքներին, շտապ բժշկական օգնության կարիք ունեցողների ընտանիքներին և սոցիալական այլ խմբերի մարդկանց: Նման օգնության չափն ամբողջ ժամանակահատվածում կազմել է **մոտ 69.5 հազար դոլար**:

Այսպիսով, 2023թ. «Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալությունը գործընկերների հետ համատեղ իրականացրել է **ավելի քան 2 մլն ԱՄՆ դոլարի** նախագծեր և ծրագրեր (տես՝ աղյուսակ):

Նախագծեր *	**Իրակա-նացված ծրագրերի արժեքը (ԱՄՆ դոլար)**	**Շահառու-ների մոտավոր թիվը**
Հանրային նշանակալի նախագծերի իրականացում, այդ թվում՝	**$ 1 355 697**	
1. Արցախի պարենային պահուստի համալրում	*$ 449 807*	*20 000*
2. Աջակցություն Արցախի էներգետիկ համակարգին	*$ 186 741*	*38 300*
3. Նվերներ Արցախի երեխաներին	*$ 171 674*	*12 000*
4. Առաջնային բուժօգնության շարժական բրիգադներ	*$ 109 802*	*20 000*
*5. Արցախում բնակելի տների վերականգնում **(ֆինանսավորվել է գործընկերների կողմից)***	-	*200*
6. Շարունակական զարգացման փառատոն «Ուսուցողական գեղաղիտակ»	*$ 45 567*	*500*
7. «Դավիթ-Բեկ» մարզական-մարտավարական խաղեր	*$ 84 000*	*120*
8. Զանգերի կենտրոն «3333»	*$ 18 396*	*4 000*
9. «Մեր սարերը» հասարակական կենտրոն	*$ 242 755*	*5 000*
10. Ռադիո «Մեր սարերը»	*$ 46 955*	*70 000*
11. Արևային ջրատաքացուցիչներ սոցիալական հաստատությունների համար (նախագծի սկզբնական արժեքը՝ $159,160)	-	
12. Նոր կյանք Արցախի ջերմոցային տնտեսություններին (նախագծի սկզբնական արժեքը՝ $266,000)	-	
13. Արևային էլեկտրակայան՝ Հանրապետական բժշկական կենտրոնի համար (նախագծի սկզբնական արժեքը՝ $835,000)	-	
Հրատապ աջակցության նախագծեր	**$ 282 675**	**5 300**

Աջակցության նախագծեր Հայաստանում՝ Արցախից բռնի տեղահանվածներին	**$ 58 980**	
1. «Թևեր» վերականգնողական ծրագիր՝ Արցախից բռնի տեղահանված երեխաների համար	*$ 13 378*	*233*
2. Օգնություն Արցախի վարպետներին	*$ 18 270*	*61*
3. «Leaders-2-Leaders» շարունակական զարգացման ծրագիր	-	*25*
4. Առաջին անհրաժեշտության կենցաղային ապրանքներ Տաթև համայնքում բնակվող արցախցիների համար	*$ 24 438*	*200*
5. Նվիրիր տոն	*$ 2 895*	*292*
Աջակցություն գործընկերների նախագծերին	**$ 117 197**	**1500**
Ուղղակի սոցիալական աջակցություն	**$ 69 488**	**28**
Հասարակական միջոցառումների կազմակերպում	**$ 235 506**	
Այլ նախագծեր	**$ 17 602**	
Իրականացում և համակարգում	**$ 580 755**	
ԸՆԴԱՄԵՆԸ	**$ 2 717 900**	

*** Այս զեկույցը չի ներառում տեղեկատվա-հաղորդակցական և փորձագիտա-խորհրդատվական ուղղվածության աշխատանքները, որոնք չեն ֆինանսավորվել Գործակալության կողմից, սակայն իրականացվել են Գործակալության հիմնադիրների և թիմի մասնակցությամբ:**

Ամբողջ աշխատանքն իրականացվել է բազմաթիվ երկրներից Գործակալության համախոհների (գործընկերների, դոնորների) լայն շրջանակի ֆինանսական նվիրատվությունների կամ նյութատեխնիկական օգնության տրամադրման շնորհիվ:

+374 60 700 800

info@ourmountains.am

https://ourmountains.am/